## ԹՎԵՐԻ ԻՄԱՍՏԸ ՀԱՅՐԵՆՆԵՐՈՒՄ

Հայագիտության մեջ ուշագրավ անդրադարձ է կատարվել նաև թվերի խորհրդաբանությանը: Մասնավորապես հիշատակման արժանի են Ստ. Մալխասյանցի «Մի առեղծված Նարեկի մեջ» հոդվածը (տե՛ս Ստ. Մալխասյանց, Բանասիրական հետազոտություններ», Ե., 1982, էջ 288-290), Պողոս Խաչատրյանի «Նարեկի միջնադարյան լուծմունքը» գրքի «Թվերի խորհրդավորություն (Միստիկա)» գլուխը, Հրաչյա Թամրազյանի «Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը» գրքի «Պյութագորա-պլատոնական թվի փիլիսոփայությունը Նարեկյան դպրոցի գիտական-գրական ավանդույթում» և «Թվի փիլիսոփայությունը և արվեստի գոյաբանական տեսությունը Գրիգոր Նարեկացու երկերում» ենթագլուխները: Թվերի խորհրդավորության ըմբռնումը բանաձևվել է հետևյալ կերպ. «Միջնադարը թվերին նայում էր որպես կյանքի և բնության օրինաչափությունների վերացարկումների, հետևապես և՝ բազմանշանակ ընդհանրացումների, որոնց հիմքում ընկած են մարդու կազմությանն ու բնախոսությանը, կենցաղային ոլորտին ու աշխատանքային գործունեությանը, շրջապատող բնությանն ու իմացության տարբեր բնագավառներին վերաբերող դիտումներ, եզրահանգումներ» (Պ. Խաչատրյան, Նարեկի միջնադարյան լուծմունքը, Ե., 1990, էջ 153): Թվերի միջնադարյան այդօրինակ ընկալումը կապված է անտիկ փիլիսոփայական մտքի հետ, որը քննության է արժանացրել Հ. Թամրազյանը՝ գրելով. «Պլատոնի մոտ հստակորեն տարբերակվում են զգայական աշխարհն ու գաղափարների աշխարհը, որ նրա փիլիսոփայության անկյունաքարն է: Սրա հետևանքով՝ թիվը ևս, իբրև իդեական աշխարհի անքակտելի մաս, կտրվում է զգայական աշխարհից՝ հանդես գալով իբրև զգայական աշխարհը մարմնավորող, կազմավորող գաղափար» (Հ. Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը, Ե., 2004, էջ 99): Իսկապես, թվերի խորհրդավորությունը գիտակցված ձևով հանդես է եկել ոչ միայն Նարեկացու ստեղծագործության մեջ, այլև հասել է մինչև Սայաթ-Նովա:

Իրեք հարուր վացուն ու վից՝ ամեն անթամըտ ղարարի...(Սայաթ-Նովա, Խաղեր, էջ 38):

Թվերի շռայլ օգտագործմամբ աչքի են ընկնում նաև հայրենները, սակայն նրանցում թվերի միստիկան իրեն զգացնել չի տալիս: Դիտենք թվերի կիրառման օրինակները հայրեններում:

Մէկ պահ մի դադար ունի. Ա/ՁԲ, 625:
Մէկն հայ էր. մէկն՝ ջհուտ. Ա/ԾԹ, 98:
Մէկն հողն է. մէկն՝ հոգին է. Ա/ՁԳ, 171:

Ակնհայտ է, որ *մէկ*-ն այստեղ ունի ուղղակի իմաստ, նրանում չկա ոչ մի խորհրդավորություն, ինչպես նկատված է այդ թվի մեկնությունը այլ առիթով. «Մեկը՝ միակը ինքնաբավ է, կատարյալ, այն ամենայն ինչի սկիզբն է, նրանից են բխում բոլոր էությունները» (Հ. Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը, էջ 102): Սակայն նշված բոլոր դեպքերում *մեկ*-ը չունի այդ խորհրդավորությունը:

Կու սիրեմ ես երկու խաթուն. Ա/Զ, 18:
Սիրու տէրք երկու կայր պառկած. Ա/ԺԵ, 12:
Երկու սիրու տէր ապլաի. Ա/ԺԵ, 15:
Էն երկու ծծին միջին. Ա/ԺԵ, 29:
Մէջ երկու ծծիս տեղ շինեմ. Ա/ԺԷ, 16:
Երկու երեսն խիստ կարօտով. Ա/ԻԸ, 6:
Երկու ծամ դեղձան ունիս. Ա/ԽԷ, 139:
Երկու բան՝ ողորմ ու լալի. Ա/ԽԹ, 68:
Երկու՝ թուխ ու մէկ բարակ. Ա/Կ, 439:
Ես երկու եար կու սիրեմ. Ա/Հ, 99:

Նույն երևույթը նկատում ենք նաև երկուսի դեպքում. բերված բոլոր դեպքերում թվի խորհրդավոր ընկալում չկա, այլ *երկու* թիվն օգտագործված է իր ուղղակի իմաստով: Սակայն մի դեպք կա, որտեղ *երկուս*-ը կիրառված է փոխաբերական իմաստով և նշանակում է *մի քանի*: Չի կարելի ասել, թե դա թվի միստիկա է, քանի որ այդ երևույթը պարզապես կապված է *երկու* թվի ժողովրդական ընկալման հետ:

Հազար զինահար, լուսին,
Պահ մի կաց՝ չուր յետ լուսանայ.
Երկու խօսկ կանկատ ունին,
Քեզ ասեմ, ապայ թէ գնայ. Ա/ԼԱ, 5-8:

Այսինքն՝ երբ ասվում է, թե երկու խոսք գանգատ ունեմ, այն պետք է հասկանալ ոչ թե *երկու խոսք* իմաստով, այլ՝ *մի քանի խոսք*. այսօր էլ ժողովրդական մտածողության մեջ ընդունված է *մի երկու խոսք* արտահայտությունը և հենց այդ իմաստով էլ ասվել է նաև հայրենում:

Որ երեսն երեք ծին ունի. Ա/ԿԹ, 2:
Եւ երեք դիմաց բաժաներ. Ա/ՁԲ, 272:

Նկատենք, որ *երեք* թիվը ևս այստեղ չունի որևէ խորհրդավոր իմաստ: Մինչդեռ *չորս* թվի խորհրդավորությունը, որի մասին գրել է նաև Դավիթ

Անհաղթը իր «Սահմանք իմաստասիրութեան» գրքում, կապվում է բնության մեջ եղած չորս տարրերի՝ հողի, ջրի, կրակի, օդի հետ:

Ջերկուսն ի մէկտեղ բերած,
Ձէտ ընկեր՝ կասեն, թէ պահէ,
Ու չորս բնութիւնս օտար
Հետ իրաց՝ կասեն, թէ սազէ.
Հինգ դուռնէ ի բաց թողած,
Ձայդ ամուր կասեն, թէ պահէ. Ա/ՁԲ, 721-726, ՁԳ, 162167:

Այս հայրենային տաղաչափությամբ գրված միավորը, որ թափանցել է հայրենների տաղաշարքերի մեջ, ըստ էության Հովհաննես Պլուզ Երզնկացու մի տաղի սկիզբն է, որ հրատարակել է Արմենուհի Սրապյանը (տես Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Ե., 1958, էջ 161): Ուրեմն՝ թվի խորհրդավորության այս ընկալումը կապվում է Հովհաննես Երզնկացու անհատականության հետ: Նույն մոտեցումն է ընկած նաև *հինգ* թվի խորհրդավորության դեպքում, որը կապվում է հինգ զգայարանների հետ: Ըստ միջնադարյան փիլիսոփաների՝ մարդու մարմինը մի անառիկ բերդ է, իսկ հինգ զգայարանները այդ բերդի դռները, որոնցով արտաքին աշխարհի գրգիռներն անցնում են մարդուն, և որոնցով սատանան գրավում է բերդը:

Ձհինգ դուռն է ի բաց թողած. Ա/ՁԲ, 737: ՁԳ, 181:

Հայտնի է, որ *յոթ* թվի խորհրդավորությունը կապվում է աստվածային անսահմանության հետ, սակայն հայրեններում *յոթ*-ն իր խորհրդով չի հանդես գալիս, այլ՝ ուղղակի իմաստով:

Եօթն տարեկան տղան. Ա/Ա, 149:
Եօթն տարեկան տղան
Իր սիրուն զէտ մոմ կու հալի. Ա/ԽԹ, 31-32:

Ինչպես *յոթ*-ը, այնպես էլ *տաս*-ը, *տասներկուս*-ը իրենց գործածության մեջ հայրեններում զուրկ են միստիկայից, դրանք կիրառված են պարզ թվային արժեքով, իրենց ուղղակի նշանակությամբ, թեև դրանք ևս միջնադարյան գրականության մեջ հաճախ հանդես են եկել խորհրդավորությամբ:

Տասը տարեկան մանուկը
Ի սիրուն զէտ մոմ կու հալի. Ա/Կ, 185-186, Ա/ՁԲ, 17-18, ՁԳ, 446-447:
Մէկին տասն արծաթ կու բերէ. Ա/Կ, 554:
Տարին տասներկու ամիս. Ա/Ա, 95:
Տարին տասներկու ամիս. Ա/ԺԵ 21, Ա/ԻՁ 33,Ա/ԽԱ 133, Ա/Ծ 187, Ա/Կ 567, Ա/ԿԸ 67, Ա/ՁԱ 101:

Նկատենք, որ մի տեղ *հինգ, վեց, յոթ*, ապա և *քառասունվեց* թվերը գործածվել են ոչ իրենց սովորական իմաստով, ոչ էլ խորհրդավորությամբ, այլ ինչպես *երկու* թիվը (Ա/ԼԱ, 5-8), ընկալվում են *մի քանի, շատ* իմաստով՝ դրսևորելով ժողովրդական մտածողության ազդեցությունն:

Աչեր յօթ ու վեց պիտէր,
Հինգ ու վեց, կամ քառսուն ու վեց.
Մէկովն այլ աշխարհ հայիմ,
Այլն ամէնն այլ ի դէպ քեզ. Ա/Հե, 65-68:

Ուղղակի են հասկացվում նաև հայրեններում հանդիպող *հարյուր, քառասուն, քսան, տասնհինգ, տասնչորս* թվերը:

Ձաղչին քարն է հարիւր լիդր
Ի ի ջրին ահէն կու դողայ. Ա/ՁԱ, 69-70:
Ապրեր եմ քառսուն տարի
Ու քաշեր հազար տարու ղամ. Ա/Կ, 385-386, Ա/ԿԲ, 7-8:
Ապրել եմ քսան տարի
Ու քաշեր հազար տարու ղամ. Ա/Ե, 81-82, Ա/ԺԶ, 15-16, Ա/ԿԹ, 33-34:
Լուսընկի նման ես դու,
Կանգնիս ի մէջ տասնուհինգին. Ա/ԿԸ, 29-30:
Հասակաւ տասնչորս ամաց. Ա/ՀԸ, 2:

Մի հայրենում հանդես են եկել նաև *հինգ հարյուր* և *վեց հազար* թվերը, որոնք ևս գործածվել են փոխաբերաբար՝ *շատ, բազմաթիվ* իմաստով:

Հինգ հարիւր ու վեցհազար
Նախշարարն ի մէկտեղ եկան,
Մէկն չկարաց գրել
Ձիմ եարին սուրաթն ի նման. Ա/ԾԹ, 167-170:

Հայրեններում բազմաթիվ անգամ հանդես է գալիս *հազար* թիվը, որը երբեմն ունի ուղղակի նշանակություն, ինչպես հետևյալ դեպքերում.

Քո գինդ է հազար մսրի,
Ես հազար կու տամ աւելի,
Աւելին այնոր կու տամ,
Օր երեսն երեք ծին ունի. Ա/Հ, 29-32:
Ձիս հազար դեկան տուգանած. Ա/Ծ, 34:
Քո գինտ է հազար կարմիր,
Ես կու տամ հազար աւելի. Ա/ԽԶ, 113-114:
Կու գան ու կու տան հազար. Ա/Ը, 33:
Կու գան ու կու տան հազար. Ա/ԿԱ, 102:
Թէ գան ու թէ տան հազար. Ա/ԿԳ, 221:

Սակայն ավելի հաճախ *հազար* թիվն ունի փոխաբերական իմաստ: Այսօր էլ ժողովրդական մտածողության մեջ արմատացած է *հազար* թվի օգտագործումը *շատ, բազմաթիվ* իմաստներով: Այսպես՝ երբ ասում են, թե հազար գործ ունեմ, չի նշանակում, որ այդքան՝ հենց հազար, գործ ունի ասողը, այլ ունի շատ գործ: *Շատ, բազմաթիվ* իմաստով է գործածված *հազար* թիվը հետևյալ դեպքերում.

Պագ հազար՝ ինչօր լուսանայ. Ա/Ա, 24:
Ու հազար նազով սնուցած. Ա/Բ, 4:

Ու քաշեր հազար տարու դամ. Ա/Ե, 82, Ա/ԺԶ, 16, Ա/ԿԹ, 34, Ա/ՀԷ, 42:
Վա յ հազար մօրրս բերելուն. Ա/Զ, 10:
Հազար ծկան լող տվի. Ա/Զ, 15:
Ես և հազար նազով սնուցած. Ա/Է, 4:
Որ թևիտ թեպրիկն է հազար. Ա/Ը, 30:
Քան հազար տարու միակեց. Ա/Ժ, 2:
Աւաղ ու հազար բերան. Ա/ԺԱ, 41:
Պագ հազար, թէ պարծենաս ոչ. Ա/ԺԳ, 4:
Հան ու տուր հազար զենեհար. Ա/ԺԴ, 4:
Ավաղ ու հազար բերան. Ա/ԿԵ, 150:
Թէ հազար ուզես՝ նա չի տայ. Ա/ԿԶ, 6:
Հազար զենեհար կու տամ. Ա/ԿԷ, 31:
Իմ մէկն հազար եղաւ. Ա/ԿԸ, 255:
Պիտէր ինձ հազար մաքի,
Հազարին եաթաղն՝ ապիկի.
Պիտէր ինձ հազար ջորի,
Ու հազրին բեռնակն ալ ոսկի. Ա/ԿԸ, 313-316:
Որ հազար ծուկն կա ի լեղ. Ա/Հ, 94:
Քանց հազար ծնօղ՝ զաւակի. Ա/ՀԳ, 21:
Կաղանդն շնորհաւոր կասեն,
Ի տարին մէկ օր մի կու գայ.
Այսօր՝ ինձ հազար կաղանդ
Աչերուս, որ զքեզ տեսայ: Ա/ՁԱ, 53-56:
Ճուկ ու մուկ հազար զուկակով. Ա/ՁԲ, 100, Ա/ ՁԳ, 540:
Թէ հազար որ տան՝ նա չուտէ. Ա/ՁԲ, 134, Ա/ՁԳ, 586:
Վա յ հազար մօրս բերելոյն. Ա/ՁԲ, 206, Ա/ՁԳ, 653:
Աւա ղ ու հազար բերան. Ա/ՁԲ, 301:
Թէ հազար շինես, սատանայ. Ա/ՁԲ, 450, Ա/ՁԳ, 54:
Յաւուրն ի հազար պահուն. Ա/ՁԲ, 581, Ա/ՁԳ, 790:
Թէ հազար որ զքեզ կու սիրէ. Ա/ՁԲ, 788, Ա/ՁԳ, 235:
Դու ապրիս հազար ժամանակ. Ա/ՁԲ, 918:
Ձէտ հազար լուսին բոլորած. Ա/ՁԲ, 946 Ա/ՁԳ, 873:
Հազար եար կու տան փոխան. Ա/ՁԲ, 1045, Ա/ՁԳ, 974:
Ի հազար դեկան կու լինի. Ա/ՁԲ, 1062:
Ու հազար չարկամ կու մտնէ. Ա/ՁԳ, 184:
Քանց հազար՝ ներքև տերկին. Ա/ՁԳ, 508:

Այսպես՝ երբ ասվում է, որ հազար ծուկ է լողանում (Որ հազար ծուկն կա ի լեղ. Ա/Հ, 94), ապա ոչ ոք չի հաշվել ջրի ծկների քանակը և ստույգ չգիտի դրանց թիվը, այլ այստեղ հստակ է, որ *հազար*-ը նշանակում է *շատ, բազմաթիվ*: Առավել ևս ոչ ոք չի հաշվել և չի կարող հաշվել փետուրների թիվը (Որ թևիտ թեպրիկն է հազար. Ա/Ը, 30): Կամ հազար տարվա մենակյաց ասելիս, բնականաբար, հասկանալի է, որ ոչ ոք հազար տարի չի ապրել (Քան հազար տարու միակեց. Ա/Ժ, 2): Եզրակացությունն այն է, որ հայրեններում *հազար* թիվը հիմնականում գործածված է փոխաբերաբար՝ *շատ, բազմաթիվ*

իմաստներով, որը ժողովրդական մտածողության արդյունք է: Ի դեպ, նույն իմաստով հանդես է գալիս նաև *հարյուր հազար* թիվը:

Զետ գէշն՝ հարիւր հազար. Ա/ԿԳ, 283:
Աստեղք, դուք հարիւր հազար. Ա/ԽԱ, 33:
Բարև քեզ հարիւր հազար,
Թէ հազար դու գիս մոռացար. Ա/ԼԶ, 1-2:
Զետ գէշն հարիւր հազար
Աղուորին չարին է պատրան. Ա/Բ, 159-160:
Բարև քեզ հարիւր հազար. Ա/Գ, 37:
Հաւեր կան հարիւր հազար. Ա/ԺԴ, 15:

Նկատենք, որ *բյուր հազար*-ը ևս ունի *հազարի* և *հարիւր հազարի* իմաստն ու նշանակությունը, այսինքն՝ թիվն այս դեպքերում զրկվում է իր բացարձակ արժեքից՝ ստանալով ոչ թվային իմաստ:

Բիւր հազար ծաղկունք հետ իրաց. Ա/ԿԲ, 40: Ա/ՀԷ, 4:
Բիւրք հազար ծաղկունք հետ իլաց. Ա/ԿԹ, 56:
Բիւր հազար ծաղկունք ի հտրաց. Ա/ՁԲ, 908:
Բիւր հազար պատրուս կա ի ներս. Ա/ԺԳ, 10:
Բիւր հազար ծաղկունքն ի հիտրաց. Ա/Կ, 409:

Ամփոփենք՝ թվերի խորհրդավորությունը՝ միստիկան, որ միջնադարյան հայ գրականության մեջ անտիկ իմաստասիրության ազդեցությամբ լայն կիրառություն է ստացել, հայրենների երգաշխարհում նկատելի է միայն մեկ դեպքում, այն էլ՝ Հովհաննես Պլուզ Երզնկացու անհատական ստեղծագործության մեջ: Մինչդեռ ոչ անհատական հայրեններում պարզ նկատելի է այն հանգամանքը, որ թվերը հանդես են գալիս կամ իրենց ուղղակի իմաստով՝ բացարձակ թվային արժեքով, կամ փոխաբերաբար արտահայտում են *շատ, բազմաթիվ, մի քանի* իմաստները: Ընդ որում՝ նշված իմաստներն արտահայտվում են ոչ միայն *հազար*, այլև *երկու, հինգ, վեց, յոթ, քառասունվեց, հինգ հարյուր, վեց հազար, հարյուր հազար, բյուր հազար* թվերով: Այս դեպքերում պարզապես ընդունում ենք, որ թվերի իմաստի ընկալման առումով ևս ժողովրդական մտածողությունն իր հետքն է թողել հայրենների երգաշխարհում: